

նութեամբ, նաև Լուսաւորչի պատարագի հատուածը, միայն սլաւոններէն թարգմանութեամբ առանց ընագրի:

Մի ուրիշ առթի կենք թողնում այդ աղօթքի և պատարագի հատուածի հայերէն թարգմանութիւնը:

Յիշողութեան վրայ հիմնուած անկարող էինք մտաբերել Լուսաւորչին վերագրած աղօթքներից մէկն ու մէկը, որ յաճախ հանդիպում ենք ձեռագրերում, եթովպականի բնագիրը համարել. անհրաժեշտ է յատուկ ուսումնասիրութիւն:

5 Մայիսի.

Մեսրոպ Եպիսկոպոս.

Х. И. Кучукъ. Іоаннесовъ, Старинныя армянскія рукописи и армянскія надписи, находящіяся въ предѣлахъ Россіи—
Խ. Յ. Քուչուկ Յովհաննիսեան, Հայերէն հին ձեռագրեր և արձանագրութիւններ, որ գտնուում են Ռուսաստանի սահմաններում, Մոսկվա, 1912. արատապուած Древностей Восточныхъ, 5. Գ, հատ. I. էջ 45. 29 լուսատիպ նկարներով:

Աշխատութեան վերջում կայ նորերս վախճանուած պր. Գ. Պալաթեանի մահացուցակը, համառօտ կենսագրութեամբ և գրական աշխատութիւնների ցանկով:

Պ. Բ. Յովհաննիսեանը բաւական ծառայութիւն ունի մատուցած յատկապէս հարաւային Ռուսաստանի հայերէն արձանագրութիւնների և մասամբ նաև ձեռագրերի ուսումնասիրութեամբ: Մոսկվայի հնագիտական ընկերութեան, որի անդամն է ինքը, պարբերական աշխատութիւնների մէջ նա շարունակ առել է այդ նիւթերի ուսումնասիրութիւնը և հայկական երբեմն ծաղկեալ և այժմ անհետացած այդ գաղթավայրի պատմութիւնը զրոյ անձը ապագայում երախտագիտութեամբ կյիշի պ. Յովհաննիսեանի անունը: Նա շատ քան է կորսաւից ազատել:

Յովհաննիսեանի յօդուածում նկարագրուած են.

ա) Երկու թերթ մագաղաթեայ պահպանակ, Ժ—ԺԱ դարու երկաթագիր, Սուրբ գրքի Ծննդոց Բ գլ. 5. Գ. գլ. 1 տունը:

Աւետ. Ղուկասու, ԺԲ 34—48 տուն:

բ) Երկրորդ յիշատակարանը Կամենեց-Պոդոլսկի հայոց եկեղեցու պատի միջի արձանագրութիւնն է, մարմար քարի վրայ.

«Շիրմիս այս էր պահարան

Մարմնոյ սորին ժամու մահվան

Զի սա էր մեծ վաճառական

Ովանէս այս ազնուական

սա էր երկրէն փարսիական

Երևանու մերձ գիւղական

Քանաքեռու անուանական

Տանէ որդի Բարաղամեան

Սա էր եղեալ երեսնամեան

Յորժամ էհաս կեանքին վաղճան

Հայոց մեծաց էր թի՛ ոճկդ-ին»:

գ) Հետեալ արձանագրութեան պատճէնը Մոսկւայի հնագիտական ընկերութիւնը ստացել է Տագանրոզից:

«1336 յամի եկն ախտ ի քաղաքն Սիս...» ապա երկու տուն սաղմոս: Պ. Յովհաննիսեանը դժբախտաբար չի բացատրում թէ արարական թուերով տարեգրութիւնը բնագրինն է, թէ արտագրողն է հայկականը Փրկչականի վերածել և տառաթուերը փոխել արարականի:

դ) Սիսեով (В. М. Сисоевъ) 1908 թուին Մոսկուայի Հն. Ընկերութեան յանձնարարութեամբ հնագիտական ձանապարհորդութիւն է կատարում Ռուսահայաստան, յատկապէս Բաճ-Կառնի, Հաուց քառ, Գեղարդ և ապա Վայոց ձոր: Սիսեովը հաւաքել է բաւական թւով արձանագրութիւններ լուսանկարչութեամբ և էստամպաժով. որոնցից Յովհաննիսեանը կարողացել է կարգալ 344 հատ: Սպասուում է, որ շուտով կհրատարակուի լոյս սփռելով Գեղարդի շրջանի և Վայոց ձորի հնութեանց վրայ: Սիսեովի ձանապարհորդութիւնը տեւել է երկու տարի:

ե) Գիլիջանի ձորում գտնուած Ղուկասեանի արձանագրութիւնները ժողովել է 1910 թ. ամառը Յ. Սպենդերեանը և պ. Յովհաննիսեանը հրատարակում է օգտուելով Մակար վ. Բարխուդարեանի Արցախի տեղեկագրութիւններից: Յաւալի է, որ հրատարակիչը չի որոշում թէ բնագրերից որն է Մակար եպիսկոպոսի հաղորդածը, որը Սպենդերեանինը: Հրատարակուած են 12 արձանագրութիւն ուսերէն թարգմանութեամբ:

զ) Մոսկուայում հիմնուած է Շչուկին քանգաւաքը (Щукин-ский музей), որի հիմնադիրը նպատակ ունի ժողովելու Ռուսաստանի հնութիւնները և արեւելից ու արեւմուտից այնպիսի իրեր, որոնք ներգործական քաղաքակրթական ազդեցութիւն են արել

Ռուսաստանի վրայ: Ձեռք են բերուած ի միջի այլոց 6 հատ հայերէն ձեռագրեր, որոնց մանրամասն նկարագրութիւնը տալիս է պ. Յովհաննիսեանը 17 լուսատիպ նկարներով:

1. ձառոց, մագաղաթեայ, 418 թերթ, բոլորգրով. 25×15 ս. մեծութեամբ: Ձեռագրի մէջ 297 թերթից մինչև վերջը կրկնազիր է, բնագիրը թ—ժ դարուց, Սւետարանի թերթերից առնուած, Գրիչն է Դաւիթ, ստացողը՝ «Ես Խոնայարս, Կղբարս Մինասարս, հաւրեղբար որդիս Լուսպարոնս Կղբ յիշատակ ի գիւղն փնչական ի դուռն ս^բ Ա^բածնին ի ձեռն Սիմեոն Լահանային»:

2, Ներսէս Շնորհալու Յ^բս Որդի. թուղթ, 230 թերթ, 11×8 ս. գեղեցիկ բոլորգրով, ժե դար. զարգարուած նկարներով: Ուշադրութեան արժանի է իւր Ներսէսի նկարը:

3. Շարական մագաղաթեայ, 464 թերթ, 14×9 , բոլորգրով, 1657 թուից զարգարուած գեղեցիկ նկարներով:

«Սարգիս գրիչս յիշեցէք ի ք^ս և ըզճնաւդսն իմ պ^բ թուման, պ^բն Դաւչակն. թվ. ՌՃԶ. Կրորդի»:

4. Շարական մագաղաթ, 290 թերթ, 12×9 , մանր բոլորգրով, նկարներով և զարդերով՝ գիչն է Յովհաննէս, ժէ դարու:

5. Փամազիբէ մագաղաթ, 158 թերթ, $21 \times 15,5$, բոլորգրով, ժԶ դարու:

6. Տօմար թուղթ, 36 թերթ, 10×7 , բոլորգրով, նկարներով:

Ձեռագրերից միայն մէկն ունի մի փոքր ընդարձակ յիշատակարան: Լուսատիպ արտահանութիւնները հնագրութեան և մանրանկարչութեան տեսակէտից կարեւոր են:

4 մայիսի

Մեսրոպ Եպիսկոպոս.

